2126.7/1484

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«03» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0044-21

Ձեռնարկողը՝ ***«Գոզե» ՍՊԸ***
Գեղարքունիքի մարզ գ. Վարդաձոր

Գործունեությունը՝ ***Սարիդեմի անդեզիտաբազալտների երևակման տարածքում 2020-2022թ.թ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0044-21

<03> 03 2021թ.

Գեղարքունիքի մարզի Սարիդեմի անդեզիտաբազալտների երևակումում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Գոզե» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Վարդաձոր համայնք

Ներածական մաս. Սարիդեմի անդեզիտաբազալտների երևակման տարածքը գտնվում է Վարդաձոր համայնքի վարչական տարածքում, համանուն գյուղից 2.5կմ դեպի արևմուտք: Մոտակա բնակավայրերն են՝ Երանոս և Ձորագյուղ գյուղերը, համապատասխանաբար 2.5-3.0կմ դեպի հյուսիս-արևելք և 1.5կմ դեպի հարավ-արևելք: Սևանա լճից երևակումը գտնվում է շուրջ 6.58կմ հեռավորության վրա: Սարիդեմի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար հայցվող տարածքը հաշվառված է որպես գյուղատնտեսական նշանակության արոտավայր:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Գեղարքունիքի մարզի Սարիդեմի անդեզիտաբազալտների երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են «Գոզե» ՍՊԸ-ի նախաձեռնությամբ իր ֆինանսական միջոցների հաշվին դրանք որպես երեսապատման նյութ (ըստ 9479-98 ԳՈՍՏ-ի), շինարարական խճի ու ավազի (ըստ ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95 և ՀՍՏ ԳՕՍՏ 8736-2014), հումք գնահատելու, պաշարների հաշվարկման հանքավայրի հետագա շահագործման համար:

Ուսումնասիրվող երևակման ծայրակետային կոորդինատներն են՝ ARM WGS-84 կոորդինային համակարգով.

X1 – 4450440 Y1 - 8513832

ՀՀ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ • ՕՑԵՆԿԻ ՎՈԶԴԵՙՍՏՎԻՅԱ ՆԱ ՕԿՐՈՒԺԱՅՈՒՇՈՒՅՈ ՍՐԵԴՈՒ • ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER • ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ • ՊՈՍՊԱՍԱՆՈՒՄ ՊՐԱՎՈ ՀՈ • RA YERevan • SNCO • 02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

X2 - 4450688	Y2 - 8513864
X3 - 4450669	Y3 - 8514029
X4 - 4450419	Y4 – 8514000

Սարիդեմի բազալտների երևակման հետախուզման մեթոդիկայի և միջոցների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, բազալտի հետախուզվող ծածկոցի ոչ մեղմաթեք տեղադրումը, տեղանքի լեռնատեխնիկական պայմանները:Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել երկրաբանահանութային աշխատանքներ 4.2հա տարածքի վրա:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132-112մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել 10 - 47 մետր խորության 5 հորատանցքեր 165.0 գծամետր ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը ու բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարվել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների

- հորատահանուկի փաստագրում – 165.0գծ. մ,
- փորձնական բացահանք - 20.0գծ.մ:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման նպատակով ըստ ներկայացվող ծրագրի հորատանցքերի հանուկից կնմուշարկվի 30 հանուկային նմուշներ և 2 մենաքարեր (բացահանքից):

Բազալտների քիմիական կազմը կուսումնասիրվի 3 նմուշներով, որոնցից մեկը՝ վերցված բացահանքից: Պետրոգրաֆիական նկարագրությունը կտրվի հորատահանուկից վերցված 2 նմուշներից պատրաստված շլիֆների հիման վրա:

Բազալտների քիմիական կազմը կորոշվի ըստ 3 նմուշների անալիզի. ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 32 նմուշներով (հորատահանուկ 30 նմուշ, մենակաքար 2 նմուշ): Նմուշներից 18-ը կենթարկվեն փորձարկումների լրիվ ծրագրով, իսկ 14-ը՝ կրճատ: Քարաբանական և միներալոգական ուսումնասիրությունները կկատարվեն 2 հղկուկների միջոցով: Լաբորատոր հետազոտման կենթարկվի մեկ համախառն նմուշ խճի ուսումնասիրման համար:

Լաբորատոր ուսումնասիրությունները և նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումներ նախատեսվում են կատարել համապատասխան մասնագիտացված լաբորատորիայում:

Լեռնային զանգվածից նախատեսվում է երևակման սահմաններում փորձնական բացահանքի անցում՝ 280մ^3 ծավալով, որից 12մ^3 լանջային փուխր նստվածքներով՝ հողաբուսական նյութի խառնուրդով, 118.0մ^3 հողմնահարված ապարներից և 150մ^3 չհողմնահարված, թարմ ապարներից: Պիտանի բլոկների ելքը լեռնազանգվածից որոշելու նպատակով փորձնական բացահանքից մենաքարերի պոկումը կկատարվի մեխանիկական, հորատասեպային եղանակով, օգտագործելով բնական ճեղքերը, որոնք կենթարկվեն շտկամշակման ГОСТ 9479-2011-ի տեխնիկական պահանջներին համապատասխան բլոկների ստացման նպատակով: Բլոկներից երեսպատման սալիկների ելքի որոշման նպատակով

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

կիրականացվի ընդհանուր ծավալով ստացված բլոկների փորձնական սղոցում, որը կկատարվի ընկերությանը պատկանող քարի մշակման արտադրամասում: Աշխատանքների ընթացքում կատարված ծախսերի և վերջնարտադրանքի քանակի մասին ստացված տվյալները կդրվեն հանքավայրի արդյունաբերական գնահատման հիմքում:

Սարիդեմի անդեզիտաբազալտների երևակման տարածքում հատուկ ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտություններ չեն կատարվելու:Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հորատանցքերի և բացահանքի անցման ընթացքում:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ, օգտակար հանածոյի ռադիացիոն հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ռադիոմետրիական չափումներ երևակման ամբողջ տարածքում СРП-68-01 գործիքի միջոցով: Աշխատանքները կիրականացվեն հորատանցքերի հորատման և փորձնական բացահանքի անցման ժամանակ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի ռելիեֆը, ծրագրով նախատեսվում է աշխատանքների իրականացման համար հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն: Նախատեսվում է 5 հորատանցքերից միայն նախագծով նախատեսված 4-րդ և 5-րդ հորատանցքերի հորատման հրապարակների և մոտեցման ճանապարհների կառուցում 220գծ.մ. և 275 մ^3 ընդհանուր ծավալով:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ հանքերևակման տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Նախքան աշխատանքների իրականացումը 0,3մ հզորությամն հողաբուսական շերտը հանվում և պահեստավորվում է տարածքի անմիջական հարևանությամբ: Հորատման աշխատանքների և փորձնական հանույթի ավարտից հետո անմիջապես կատարվում է տարածքի վերականգնում՝ օգտագործելով նախապես հանված հողաբուսական շերտը: Ռեկուլտիվացման ծավալը կկազմի 407,4մ^3, որից 14,4մ^3՝ հորատման հարթակները, 275մ^3՝ ճանապարհը և 118մ^3՝ փորձնական բացահանքի տարածք: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար ձեռնարկության կողմից նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացնել 132000 (հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ գումար:

Անմիջապես երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, բնության հուշարձաններ հաշվառված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,

- փոշենստեցման նպատակով և անձնակազմի կենցաղային կարիքների համար օգտագործվող ջուրը մատակարարվելու է պայմանագրային հիմունքներով մոտակա բնակավայրից,

- կեղտաջրերի հավաքում սեպտիկ հորում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

- կենցաղային աղբը կհավաքվի 35լ տարողությամբ հատուկ անթափանց տոպրակների մեջ և կտեղափոխվի Վարդաձոր գյուղի աղբավայրը (նախապես համաձայնեցնելով համայնքապետարանի հետ),

- խախտված տարածքների ռեկուլտիվացիա,

- բուսական աշխարհի և ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան :

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Գոզե» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, հետախուզական փորվածքների անցման շրջանում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, ՀՀ կառավարության 24.08.2007թ.-ի թիվ 1277-Ն որոշմամբ սահմանված աղտոտիչ նյութերով հայցվող տեղամասի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:

Պատճառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, «Սևան ազգային պարկ» ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետարանը: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է ապահովել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված նորմերի կատարումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գոզե» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի «Սարիդեմի» անդեզիտաբազալտների երևակումում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան